ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՆԵՐՈՒԺ» ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՍԹԱՐԹԱՓ ԾՐԱԳԻՐ

Մեծ ուրախությամբ տեղեկացնում ենք, որ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի հիմնադրամի (FAST foundation) հետ համագործակցությամբ մեկնարկում են «ՆերՈւժ 2» սփյուռքահայերի ինտերակտիվ սթարթափ ծրագիրը:

Ծրագիրը նպատակ ունի աշխարհի տարբեր երկրներում ապրող 7 միլիոնանոց հայկական Սփյուռքի հսկայածավալ ներուժը տեղափոխելու Հայաստան՝ մասը կազմելու երկրի առաջխաղացման գործընթացներում և նախաձեռնելու իրենց սթարթափը Հայաստանում:

Ծրագրին կարող են դիմել այն սթարթափները, որոնք ունեն ձևավորված թիմ, համահիմնադիրներից առնվազն մեկը ազգությամբ հայ է և պատրաստակամ է հաստատել և գրանցել սթարթափը Հայաստանում և այստեղ ապրել առնվազն 1 տարի:

«ՆերՈւժ2»-ի թիրախային ոլորտներն են ֆինանսական, սոցիալական, կառավարման, կրթական, շարժական, ինտերնետային, գյուղատնտեսական տեխնոլոգիաները, առողջապահությունը, ռոբոտաշինությունը, ինժեներական արվեստը և այլն:

Հաղթող թիմերը կհրավիրվեն Հայաստան՝ հայրենադարձվելու իրենց երկիր և ստանալու 15-ից 30 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի դրամաշնորհներ, ինչպես նաև կստանան ձեռնարկատիրական աջակցություն՝ Հայաստանում իրենց ձեռնարկությունները զարգացնելու նպատակով:

Ծրագրի գործընկերներ են IDeA հիմնադրամը, UWC Դիլիջանի քոլեջը:

Ծրագիրը կմեկնարկի Հայաստանում՝ UWC Դիլիջան քոլեջում, 2019 թվականի դեկտեմբերի 16-ից 20-ը՝ քառօրյա միջոցառման շրջանակներում:

Ծրագրին դիմել ցանկացողները կարող են այցելել neruzh.am կայք էջ կամ կապվել մեզ հետ info@neruzh.am էլ. հասցեով:

FAST DISCOVERING THE FUTURE

IDeA FOUNDATION Initiatives for Development of Armenia

UWC DILIJAN COLLEGE